ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին պրոբացիայի շահառուների համար իրականացրած վերասոցիալականացման ուղղված միջոցառումների, ծառայության համագործակցության, պրոբացիայի ծառայողների վերապատրաստման, հանրային իրազեկման և կամավորների վերաբերյալ

1. ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏ- Դասընթացներ, որոնց մասնակցելով շահառուները ձեռք են բերում ինչպես տեսական այնպես էլ պրակտիկ գիտելիքներ, ինչպես նաև դասընթացի ավարտին նրանց տրվում է հավաստագիր, որը կարող է հիմք հանդիսանալ աշխատանք ձեռք բերելուն:

2018 թվականին ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում եռամսյա ծրագրով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անցկացվել են «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Առողջ ապրելակերպ», «Համակարգչային հմտություններ» դասընթացները:

Դասընթացին մասնակցել և ավարտական վկայական են ստացել **36** պրոբացիայի շահառու՝ **7** շահառու դեկորատիվ կիրառական արվեստ, **7** շահառու առողջ ապրելակերպ և **22** շահառու համակարգչային հմտություններ:

Կրթության ոլորտի հետ կապված ծառայության կողմից **4** անչափահասներ ուղղորդվել են հանրակրթական դպրոցներ՝ ուսումը շարունակելու նպատակով:

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏ ԵՎ ԱՅԼՆ /Մարզական միջոցառումներ, այցելություն եկեղեցի, շաբաթօրյակների մասնակցություն/

Պետական կառույցների, ստեղծագործ անհատների և հասարակական կազմակերպու թյունների հետ համահամագործակցության արդյունքում հնարավոր է եղել շահառուների մասնակցությունը մշակութային միջոցառումներին, մասնավորապես՝

ՀՀ Մշակույթի նախարարության աջակցությամբ Հայաստանի անկախության 27-ամյակի տոնին նվիրված միջոցառումների շրջանակներում պրոբացիայի **32** շահառուները և նրանց ընտանիքի անդամները մասնակցել են մշակութային միջոցառումներին՝

1) 2018 թվականի սեպտեմբերի 20-ին՝ Երևանյան 12-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում Հայաստանի անկախության օրվան նվիրված համերգին,

2) 2018 թվականի սեպտեմբերի 27-ին՝ «Սասնա Ծռեր» թատերական ներկայացմանը,

«Սոցիալական արդարություն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ պրոբացիայի **30** շահառուների համար կազմակերպվել է մի շարք ճանաչողական այցեր՝

1) 2018 թվականի մայիսի 31-ին՝ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան,

2) 2018 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան,

3) 2018 թվականի հոկտեմբերի 23-ին՝ Սերգեյ Փարաջանովի թանգարան:

Ռեժիսոր, սցենարիստ Աննա Թովմասյանի հետ համագործակցության արդյունքում պրոբացիայի **25** շահառուները պրոբացիայի ծառայության շենքում 2018 թվականի փետրվարի 8-ին և սեպտեմբերի 12-ին հնարավորություն են ունեցել դիտելու Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված պատմական ֆիլմերի շարքը:

Ծառայության Երևան քաղաքային մարմնի աշխատակիցների կողմից 2018 թվականի փետրվարի 20-ին «Գիրք նվիրելու տոնի» շրջանակներում պրոբացիայի ծառայության շենքում կազմակերպվել էր հանդիպում պրոբացիայի **15** շահառուների հետ, որի ընթացքում շահառուները միմյանց են նվիրել գրքեր/ մի քանիսը իրենց իսկ հեղինակային գրքերը/:

Ծառայության Լոռու մարզային բաժնի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը «Խաչվող ուղիներ» սոցիալական հասարակական կազմակերպության /ՍՀԿ/ «Անչափահաս և երիտասարդ իրավախախտ ների վերասոցիալականացման խթանում» ծրագրի շրջանակներում շահառուների համար իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) Հոգեբանի և սոցիալական աշխատողների կողմից անհատական և խմբային հանդիպումներ են պլանավորվել և իրականացվել ծրագրում ընդգրկված բոլոր շահառուների հետ:
2) Խմբային աշխատանքներ են իրականացվել ք. Վանաձորում և ք. Տաշիրում՝ «Հաղորդակցման հմտություններ», «Կոնֆլիկտի կառավարում», «Ագրեսիայի կառավարում», «Սթրեսի կառավարում, օբյեկտիվ ինքնագնահատականի ձևավորում», «Ինքնաճանաչում, սոցիալական դեր», «Թրաֆիքինգ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ» թեմաներով:
3) «Խաչվող ուղիներ» ՍՀԿ-ի աշխատակիցների հետ համատեղ կազմակերպվել է շահառուների այցը Վանաձորի կերպարվեստի թանգարան:
4) «Խաչվող ուղիներ» ՍՀԿ-ի աշխատակիցների հետ համատեղ տուն այցեր են իրականացվել ծրագրում ներառված բոլոր անչափահաս և բարձր ռիսկայնություն ունեցող չափահաս շահառուներին:
5) Անհատական սոցիալ-հոգեբանական աշխատանքներ են իրականացվել ծրագրում չընդգրկված 3 շահառուի հետ:
6) «Խաչվող ուղիներ» ՍՀԿ-ի կողմից մեկ շահառուի նյութական աջակցություն է ցուցաբերվել ՝ չոր սննդի փաթեթի տեսքով՝ «Հայկական կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի կողմից:

Ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թիվը՝ **41**, որից **2**-ը անչափահաս և **2**-ը կին: Ընդհանուր շահառուներից **12**-ը ք. Տաշիրից և հարակից գյուղերից, **4**-ը ք. Սպիտակից և հարակից գյուղերից, **1-ը** ք. Ստեփանավանից, **24** -ը ք. Վանաձորից և հարակից գյուղերից:

Ծառայության Վայոց Ձորի մարզային բաժինը՝

1) 2018 թվականի օգոստոսի 28-ին Եղեգնաձորի համայնքային մարզադպրոցի տարածքում՝ մարզադպրոցի աջակցությամբ կազմակերպել և անցկացրել է «վոլեյբոլ» խաղի մրցումներ, որին ներգրավված են եղել **10** շահառուներ:

2) 2018 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի հետ համատեղ կազմակերպել է **10** շահառուների մասնակցությունը Եղեգնաձոր քաղաքում տեղի ունեցած մշակութային միջոցառմանը,

Ծառայության Արմավիրի մարզային բաժնի կողմից պարբերաբար կազմակերպվում է բաժնում հաշվառված շահառուների հանդիպումը հայ Առաքելական եկեղեցու հոգևորականների հետ՝ կրկնահանցագործության նվազեցման գործում կարևորելով նաև եկեղեցու, հոգևորականների դերը շահառուների վարքը և մտածելակերպը փոխելու հարցում:

1) Էջմիածնում հայտարարված «Կոմիտասյան օրեր» միջոցառումների շրջանակում 2018 թվականի սեպտեմբերի 26-ին և 27-ին պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզի աշխատակիցները և բաժնում հաշվառված **10** շահառուները Գևորգյան հոգևոր ճեմարանի Կոմիտասի անվան ցուցասրահ, որտեղ դիտել են Կոմիտասին նվիրված ֆիլմ:

Ծառայության Արարատի մարզային բաժնի կողմից ապահովվել էր **10** շահառուների մասնակցությունը 2018 թվականի մարտի 31-ին Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված համաքաղաքային շաբաթօրյակ-ծառատունկին:

3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ- Շահառուի հետ անհատական զրույցի ընթացքում պրոբացիայի ծառայողը փորձում է հասկանալ տվյալ շահառուի մոտ առկա հոգեբանական խնդիրները, հարկ եղած դեպքում կապ է հաստատում ընտանիքի անդամների հետ և փորձում է շտկել խնդիրը:

Ծառայությունում աշխատում է հոգեբան, ում մոտ ուղղորդվում են շահառուները՝ իրենց հոգեբանական խնդիրները և հարցերը քննարկելու նպատակով: 2018 թվականի ընթացքում հոգեբանն առաջին հանդիպում է ունեցել **30** շահառուի հետ, իսկ **4** շահառուի հետ տարվել են անհատական և երկարատ աշխատանքներ**:**

1) 2018 թվականի փետրվարի 6-ին ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունը **«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Խ. Աբովյանի հայկական պետական մանկավարժական համալսարանի** հետ համատեղ պրոբացիայի պետական ծառայությունում հաշվառված կին շահառուների համար կազմակերպել և անցկացրել է «Անձնային աճ և դրական դիրքորոշումների ձևավորում» թեմայով հանդիպում:

2) **«Սոցիալական արդարություն» ՀԿ-ի** կողմից 1 /մեկ/ տարի շարունակ անցկացվել են մասնագիտական հոգեբանական և սոցիալական դասընթացներ՝ ուղղված շահառուների հաղորդակցման հմտությունների ձևավորմանը, կոնֆլիկտների և հույզերի կառավարմանը, տագնապայնության և սթրեսի նվազեցմանը, որի ընթացքում շահառուները ձեռք են բերել այնպիսի գիտելիքներ, որոնց շնորհիվ փորձել են կարգավորել իրենց կյանքում առկա խնդիրները:

3) Եթե առկա են ընտանեկան լուրջ պրոբլեմներ, ապա պրոբացիայի ծառայողի կողմից պարբերաբար այց է կատարվում շահառուի բնակության հասցե, իսկ անչափահաս շահառուների դեպքում ամիսը մեկ անգամ:

Շահառուների հետ տարվող աշխատանքներում որպես դրական գրանցած արդյունք կարող ենք բերել հետևյալ օրինակները՝

Երևան քաղաքային մարմնի աշխատակցի ջանքերի շնորհիվ՝ **1** շահառու ընդունվել է ԲՈՒՀ, **2** կին շահառուներ, որոնք գտնվում էին ամուսնալուծության շեմին, ամենօրյա հոգեբանական աշխատանքների և պրոբացիայի աշխատակցի տնայցերի շնորհիվ հնարավոր է եղել կարգավորել նրանց ընտանիքում տիրող մթնոլորտը

4. <u>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ-</u> Պրոբացիայի ծառայությունը համագործակցել է մի շարք կառույցների հետ, որի արդյունքում փորձում է լուծում տալ շահառուների կյանքում ծագած խնդիրներին:

Երևան քաղաքային մարմնի կողմից համագործակցություն է եղել տարբեր վարչական շրջանների զբաղվածության կենտրոնների/աշխատանքի ապահովում/, սոցիալական աշխատողների/նպաստի տրամադրում/, գործատուների միություն /աշխատանքի ապահովում/, «ՀՕՖ» կենտրոնի /անչափահասների հետ տարել են աշխատանքներ/, բժշկական հաստատությունների/անվճար տրամադրել են բուժօգնություն/, «Սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի/անչափահասների հետ կրթական ծրագրեր/, «Պարգևիր ժպիտ» բարեգործական կենտրոնի/տրամադրել են հագուստ/ հետ, որի արդյունքում աջակցություն է ցուցաբերվել **40** շահառուների:

Պրոբացիայի ծառայության հետ **2018 թվականին** համագործակցել են՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալությունը
2. ՀՀ Մշակույթի նախարարությունը
3. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
4. «Սոցիալական արդարություն» ՀԿ
5. «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ
6. «Փի-Էյչ-Ինթերնեշնլ» հայկական մասնաճյուղը
7. «Հայաստանի Գործատուների Հանրապետական Միությունը»
8. ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը
9. Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ)

<u>Համագործակցության հուշագրերի ստորագրում</u>

1) 2018 թվականի սեպտեմբերի 6-ին ստորագրվել է համագործակցության և փոխադարձ աջակցության մասին եռակողմ հուշագիր՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի և «Հայաստանի գործատուների հանրապետական միության» միջև, որի հիմնական նպատակն է նախկին դատապարտյալների վերաինտեգրումը, պրոբացիայի շահառուների մասնագիտությունների ձեռքբերումը և աշխատանքի ապահովումը,

Արդյունքում պրոբացիայի շահառուներին տրամադրվել է տեղեկատվություն Երևան, Վանաձոր, Գյումրի, Հրազդան քաղաքներում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

2) 2018թ. դեկտեմբերի 21-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության և Քաղաքացիական հասարակության կազմակերպություն ների «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի կառավարման խորհրդի միջև, որի նպատակն է նպաստել Հայաստանում պրոբացիայի ոլորտի բարեփոխումների իրականացմանը՝ անհրաժեշտ աջակցության ցուցաբերման, հանրային վերահսկողության իրականացման, ՔՀԿ-ների ներուժի համախմբման և կարողությունների զարգացման միջոցով խթանել և ընդլայնել պրոբացիայի շահառուների՝ վերականգնողական ծառայություններ ստանալու և վերասոցիալականացում ապահովելու հնարավորությունները:

5. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ-ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ

1) 2018 թվականին պրոբացիայի ծառայության **14** աշխատակիցները մասնակցել են քաղաքացիական ծառայության վերապատրաստման դասընթացներին:

2) 2018 թ. մայիսի 21-25-ն անցկացվել է «Բազմաոլորտային ազգային հարթակի ուժեղացում՝ ուղղված երեխաների հանդեպ բռնությունը վերջ դնելու գործողությունների պլանավորմանը, իրագործմանը և գնահատմանը» վերապատրաստման ծրագիրը, որին մասնակցել են ծառայության **40** աշխատակիցները:

3) 2018 թ. նոյեմբերի 24-29-ը ԱՄՆ պետդեպարտամենտի՝ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի ֆինանսավորմամբ և «Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից «ՀՀ պրոբացիայի ծառայության աջակցության ծրագրի» շրջանակներում կազմակերպված «Վերապատրաստողների վերապատրաստման» 6-օրյա դասընթացին, որին մասնակցել են ծառայության **7** աշխատակիցները:

4) 2018 թվականի ընթացքում Ծառայության պետի հետ միասին Կենտրոնական մարմնի բաժնի պետերի կողմից իրականացվել են շրջայցեր ծառայության տարածքային մարզային բաժիններ՝ աշխատակիցներին ՀՀ կառավարության **2018 թ. ապրիլի 5-ի** «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության ներքին կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 1561-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 395-Ն որոշումը** և ՀՀ արդարադատության նախարարի **2018 թվականի հուլիսի 12-ի** «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» **N 336-L հրամանը** ծանոթացնելու և աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով վերապատրաստելու համար:

Պրոբացիայի ծառայության աշխատակիցները 2018 թվականին մասնակցել են նաև հետևյալ հանդիպում-քննարկումներին՝

1) 2018 թվականի փետրվարի 1-2-ը կազմակերպված «Պրոբացիայի պետական ծառայությունում իրավախախտների վերասոցիալականացումը՝ համայնքում գործընկերության զարգացման միջոցով» թեմայով երկօրյա դասընթացին,

2) 2018 թվականի հունիսի 1-ին և հունիսի 19-ին «Անչափահաս և երիտասարդ իրավախախտների վերասոցիալականացման խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպված Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչների ու տարբեր գործատուների մասնակցությամբ հանդիպմանը և դեպք վարողների սեմինար-քննարկմանը,

3) 2018 թվականի սեպտեմբերի 19-ին կայացած ՀՀ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալության ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպմանը,

Միջազգային փորձի փոխանակման նպատակով՝

4) 2018 թվականի հոկտեմբերի 1-ին Ամերիկյան Խորհուրդների և ԱՄՆ պետական դեպարտամենտի ֆինանսավորմամբ և աջակցությամբ Professional Fellows Program /PFP/ ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած Ատլանտայի հանրային պաշտպանի գրասենյակի տնօրենի տեղակալ Լուանա Ուոլշի հետ հանդիպմանը,

5) 2018 թվականի հոկտեմբերի 9-ին ԱՄՆ-ի դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի կողմից իրականացվող կոռուպցիայի դեմ պայքարի, պրոբացիոն և քրեակատարողական համակարգի գործարկելուն աջակցելու ծրագրի շրջանակներում Հայաստան ժամանած պրոբացիայի հարցերով խորհրդատու Մարտին Ջ. Քրիզեի հետ հանդիպմանը: ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում Մ. Քրիզեն 10.09.2018-ից մինչև 03.11.2018 թվականը փորձի փոխանակում է իրականացրել և տրամադրել ուղղակի կառավարման խորհրդատվություն:

6) 2018 թվականի հոկտեմբերի 18-ին Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) կողմից Հայաստան հրավիրված գերմանացի փորձագետներ՝ Վոլֆգանգ Այխշթեդթերի և Հայնց Կորնելի հետ Կլոր-սեղան քննարկմանը,

<u>Միջազգային փորձի փոխանակման նպատակով գործուղումներ</u>

1) 2018 թվականի նոյեմբերի 15-16-ը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության էլեկտրոնային մոնիթորինգի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժ/պ Արամ Դարբինյանը մասնակցել է Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում անցկացվող հանրային աշխատանքներ պատժամիջոցի վերաբերյալ քննարկմանը:

2) 2018 թվականի դեկտեմբերի 10-14-ը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության պետ Արսեն Նավասարդյանը Եվրոպական հանձնաժողովի Տեխնիկական օժանդակության և տեղեկատվության փոխանակման ծրագրի շրջանակում ուսումնական այցով գտնվել է Գերմանիայում,

3) 2018 թվականի դեկտեմբերի 10-20-ը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության էլեկտրոնային մոնիթորինգի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժ/պ Արամ Դարբինյանը էլեկտրոնային սարքավորումների և փորձի փոխանակման նպատակով ուսումնական այցով գտնվել է ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում:

<u>6. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ</u>

2018 թվականի ընթացքում նախագծման աշխատանքներ են իրականացվել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության **<u>www.probation.am</u>** պաշտոնական կայքի ներդրման նպատակով, որը թողարկվել և սկսել է գործել 2018 թվականի հոկտեմբեր ամսից: Կայքի ստեղծումով բարձրացել է հասարակության իրազեկվածությունը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ, որի օգնությամբ օգտատերերը կարող են նաև իրազեկվել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության նախաձեռնությունների, հրապարակումների, շահառուների համար իրականացված վերասոցիալականացման ծրագրերի և թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությանը:

2018 թվականի ընթացքում պատրաստվել և պաշտոնական կայքում է տեղադրվել, ինչպես նաև ծառայության Ֆեսբուքյան էջով տարածվել է **43** նորություն, **9** հայտարարություն, ՋԼՄ-ների կողմից ծառայությանն անդրադարձած **17** հաղորդագրություններ:

<u>7. ԿԱՄԱՎՈՐՆԵՐ</u>

2018 թվականին պրոբացիայի ծառայության կողմից ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով կամավորներից ընդունվել են համապատասխան փաստաթղթերը, որից հետո պատրաստվել և ծառայության պետի հաստատմանն են ներկայացվել **25** կամավորների պայմանագրեր: